ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ CBA-2026-069 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ № 1

ՀՀ կենտրոնական բանկի կարիքների ապահովման համար՝ **մաքրության ծառայության** մատուցման նպատակով **CBA-2026-069** ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է 22.10.2026թ. դրությամբ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները՝

1. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Որքա՞ն է բանկի տարածքի մակերեսը

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Համաձայն մրցույթի Հրավերի Հավելված 1-ի 2.3 կետի՝ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար անհրաժեշտ է մոտենալ Պատվիրատուի վարչական շենք և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն տարածքի, շենքում մարդկանց օրական միջինացված շարժի, կատարվելիք ծառայությունների մանրամասների, պահանջների և պայմանների վերաբերյալ՝ տեղեկատվության չբացահայտման համապատասխան համաձայնագիր ստորագրելու դեպքում: Այցելության համար անհրաժեշտ է նախապես դիմել Գնումների համակարգման ծառայություն procurement@cba.am էլ. հասցեով՝ նշելով անուն, ազգանուն, կազմակերպության անվանում: Մասնակիցը պետք է ունենա անձը հաստատող փաստաթուղթ և լիազորագիր՝ ըստ անհրաժեշտության:

2. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Արդյո՞ք մասնակցի ներկայացրած գինը չպետք է գերազանցի հրապարակային ծանուցման մեջ նշված գնման գնին

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների առաջարկած գների՝ գնման գինը գերազանցելու դեպքում կիրառվում են

մրցույթի հրավերի 6.13 կետով նախատեսված կարգավորումները:

3. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հրապարակային ծանուցման 7.1 կետում նշված նախավճարը պետք է հաշվել առաջարկվող ամսակա՞ն գնի 5 տոկոսը, թե տարեկան գնի:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Համաձայն մրցույթի հրավերի 7.1 կետի՝ նախավճարի չափը կազմում է մասնակցի առաջարկվող գնի 5 (հինգ) տոկոսը: Հետևաբար, նախավճարը հաշվարկվում է մասնակցի առաջարկած՝ 12 ամսվա ծառայությունների մատուցման ընդհանուր գնի նկատմամբ, այլ ոչ թե ամսական գնի:

ՀՀ կենտրոնական բանկի Մրցութային հանձնաժողովի քարտուղար՝
Սիրան Եգանյան
Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ